§ 34. Արտազատության համակարգի հիգիենան

Խմբավորե՛ք **արտազատության օրգանների հիվանդությունների** առաջացման պատճառները (I-VI) նրանց հետևանքների հետ (1-6) և տեղադրե՛ք աղյուսակի երկրորդ սյունակում:

Պատճառ	Հետևանք
I. Այլ հիվանդությունների հետևանք	
II. Անձնական հիգիենայի կանոնների խախտում	
III. Ուժեղ մրսածություն, թոքաբորբ	
IV. Նյութափոխության որոշ արգասիքների (աղերի) կուտակում միզարտադրության օրգաններում	
V. Ալկոհոլի և կծու, թթու սննդանյութերի ոչ չափավոր օգտագործում	
VI. Շատ աղի կամ շատ անալի սննդի ու ջրի չարաշահում	

Հետևանքներ.

1. *Երիկամի բջիջների քայքայում առաջացած թույների միջոցով:*
2. *Մանրէների վարընթաց թափանցում միզարտադրության օրգաններ:*
3. *Միզաքարերի արտադրություն:*
4. *Միզարտադրության գործառույթների խանգարում:*
5. *Ներքին միջավայրի բաղադրության խախտում:*
6. *Մանրէների վերընթաց թափանցում միզարտադրության օրգաններ:*